**Հաստատում եմ՝**

**Երևանի Ստ. Զորյանի անվան թիվ 56**

**հիմնական դպրոցի տնօրեն Ս. Գալստյան**

# Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵրևանիՍտ. Զորյանի անվանթիվ 56 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ

Դասարան՝7 գ

Դասղեկ՝ Ա.Մկրտչյան

# Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

## 1.Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիր/

Դասարանում սովորում է 25 աշակերտ՝ 13 տղա, 12 աղջիկ: Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ: Բոլոր համերաշխ են, համախմբված, աշխատասեր, ունեն պարտքի և պատասխանատվության զգացում, ազնվություն, ընկերասեր են, դրսևորում են բարձր հոգատարություն և ուշադրություն միմյանց նկատմամբ: Կանոնավոր կերպով հաճախում են ուսումնական պարապմունքներին, գիտեն և ճշտությամբ հետևում են աշակերտների համար սահմանված կարգապահական կանոններին, կազմակերպված են, քաղաքավարի մեծերի և միմյանց նկատմամբ: Բարի են, մեծահոգի, հասարակությանը, մարդկանց օգնելու պատրաստակամությամբ օժտված:

Առաջնորդվում են հետևյալ կարգախոսով՝ «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի»:

2.Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը:

1. Ուշադրությունը դարձնել դասարանի համախմբվածության վրա: Նպաստել աշակերտների մեջ կազմակերպչական հմտությունների զարգացմանը, դաստիարակել բարեկամություն, ընկերասիրություն, ազնվություն, ճշմարտախոսություն, հարգանք և սիրալիրություն:
2. Կարևորագույն խնդիր է դասարանում առաջադիմության բարձրացումը, ուսումնական աշխատանքում փոխօգնության կազմակերպումը:
3. Դասարանում ամեն կերպ բարձրացնել կարգապահությունը: Պարզաբանել աշակերտներին «Կարգապահական կանոնները», նրանց վարժեցնել՝ պահպանելու օրվա ռեժիմը, կանոնավոր կերպով հաճախել ուսումնական պարապմունքներին , բարեխիղճ վերաբերմունք ունենալ հասարակական սեփականության (դպրոցական և սպորտային գույք) նկատմամբ: Աշակերտների մեջ դաստիարակել հայրենասիրության , ուսման նկատմամբ գիտակցական վերաբերմունք և մտավոր աշխատանքի կուլտուրայի բարձրացում:
4. Դաստիարակել հարգանք մեծերի նկատմամբ:

5. Մասնակցեն դասարանի, դպրոցական շենքի , բակի բարեկարգման, դպրոցամերձ տարածքի մաքրման (շաբաթօրյակներ) աշխատանքներին:

## 3.Հայեցի դաստիարակություն.

### 3.1 Հոգևոր դաստիարակություն.

Ազգայի, կրոնական, հոգևոր դաստիարակությունը որպես հիմք՝ աշակերտներին խոհեմ, խելացի, աստվածավախ, հանդուրժող, համերաշխ, փոխըմբռնող և հայրենասեր մարդ դաստիարակելու նպատակով հաճախ կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմամշակութայի հոգևոր կենտրոններ, նրանց մեջ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության, հայրենիքի նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:
Առաջնորդվել հետևյալ նշանաբանով. « Նա , ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել այն»…/ Ռաֆֆի /

### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

_Կազմակերպել տարաբնույթ էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, տուն-թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ, կինոթատրոններ և թատրոններ, համերգասրահներ: Օգնել աշակերտներին զբաղվել երաժշտությամբ, գեղանկարչությամբ, նրանց ընդգրկել գրական-ստեղծագործական խմբակներում՝ վոկալ, պարարվեստ, գեղանկարչություն, պարարվեստ և շատ ուրիշ գեղագիտական խմբակներ:
Գեղագիտական դաստիարակության լավագույն դպրոց է հանդիսանում տոների և հիշարժան տարեթվերի նախապատրաստումը և անցկացումը:
3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Կազմակերպել ռազմահայրենասիրական միոցառումներ, զեկուցումներ, բաց դասեր: Աշակերտների մեջ դաստիարակել հայրենասիրական զգացում, զարգացնել հետաքրքրությունը մեր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ: Հայրենիքի ազատության և անկախության համար մարտնչող հերոս զավակների սխրանքների վեհության բացահայտում. <<Ինչից է սկսվում հայրենիքը>> թեմայով զեկուցում:

## 3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Մատաղ սերնդի ֆիզիկական դաստիրարակությունը և զարգացումը համակողմանի զարգացած մարդիկ պատրաստելու միջոցներից մեկն է: Աշակերտներին վարժեցնել՝ կանոնավոր կերպով զբաղվել առավոտյան մարմնամարզությամբ, նրանց ներգրավել համադպրոցական սպորտային խմբակներում: Սպորտային տարբեր խմբակներում ընդգրկվելը աշակերտների կողմից մեծ օգնություն է դպրոցական սպորտլանդիաների կազմակերպման և անցկացման համար: Արշավների կազմակերպում, որոնք կօգնեն աշակերտներին ամրապնդել իրենց առողջությունը:

## 3.5 Աշխատանքային դաստիարակություն

Մասնակցություն դպրոցական բակի բարեկարգման, դպրոցամերձ տարածքների մաքրման, կանաչապատման աշխատանքներին: Դպրոցում և դասարաններում մաքրության պահպանումը դարձնել կարևոր նախապայման: Մասնակցություն դպրոցական ծառատունկերին, շաբաթօրյակներին, օգնություն ցույց տալ ավագ դասընկերներին դպրոցական այգին խնամելու գործում (հողի փխրեցում, ծառերի սպիտակեցում, ծաղիկների տնկում): Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը:

## 3.6 Բնապահպանական դաստիարակություն.

Պատմության և բնության ուսումնասիրության կապակցությամբ կազմակերպել ճանաչողական, բնապահպանական էքսկուրսիաներ դեպի `

- Երկրաբանության թանգարան,
- Ստեփանավան, <<Դենդրոպարկ>>,
- բուսաբանական այգի,
- քաղաքի պատմական հուշարձաններ,
- Գառնու հեթանոսական տաճար,
- Գեղարդ վանական համալիր,
- Դիլիջանի գեղատեսիլ վայրեր,
- Սաղմոսավանք, Օհանավանք, Հառիճավանք, Լոռվա բերդ

- Խոսրովի անտառի տարածքում Գևորգ մարզպետունու բերդ-ամրոց • Խոր Վիրապ, Ջերմուկ, Նորավանք:

## 3.7 Դպրոց -ընտանիք կապը

Ընտանիքը՝ որպես հասարակության հիմնական տարր, եղել և մնում է մարդկային արժեքների, մշակույթի պահպանողը: Ընտանիքի շնորհիվ ամրանում ու զարգանում է պետությունը, աճում է ժողովրդի բարեկեցությունը: Երեխաները պետք է հասկանան, որ ամուր ընտանիքը ամուր պետության հիմքն է, իսկ ամուր պետության և ամուր ընտանիքի հիմքում ընկած է լավ կրթությունը:

Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.

· Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.

· Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.

· Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակությունհմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուս. շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ամսաթիվ | Կատարվել է |
|---|---|---|---|
| I | Դպրոց հաճախելու կանոնները, սովորողների իրավունքներն ու պարտականությունները | սեպտեմբեր | |
| II | Մեզ ինչի համար է հարկավոր կարգապահությունը: | սեպտեմբեր | |
| III | Անկախությունը՝ որպես մեծագույն արժեք և նվաճում.ՀՀ պետական խորհրդանիշները | սեպտեմբեր | |

| | | | |
|---|---|---|---|
| IV | Հուզական ինտելեկտ։ Հիմնական բաղադրիչները, նշանակությունը | սեպտեմբեր | |
| VI | Հուզական գրագիտություն, հուզական ինտելեկտ | հոկտեմբեր | |
| V | Արգիշտիի հիմնադրած քաղաքը.***հին և նոր Երևան*** | հոկտեմբեր | |
| VII | Ի՞նչ է բուլինգը։Բուլինգի կառուցվածքը /շրջանակը/։ | հոկտեմբեր | |
| VIII | Ագրեսիան՝ որպես բուլինգի հիմքում ընկած գործոն | նոյեմբեր | |
| IX | Ինչպես եմ հաղթահարում բարկությունս | նոյեմբեր | |
| X | Բուլինգի հաղթահարման ուղիները | նոյեմբեր | |
| XI | Կանխարգելենք բուլինգը | նոյեմբեր | |
| XII | Բնական աղետներ ։ Ի՞նչ է երկրաշարժը | նոյեմբեր | |
| XIII | Խոսքն ուժ ունի. խելամիտ օգտագործի՛ր այն | | |
| XIV | Ի՞նչ է ատելության խոսքը։ Ինչպե՞ս է մեդիան նպաստում ատելության խոսքի տարածմանը | դեկտեմբեր | |
| XV | Ամանոր։Ինչպե՞ս են նշել Ամանորը հնում։ Ծննդյան տոնի խորհուրդը | դեկտեմբեր | |
| XVI | Մեզ շրջապատող հույզերն ու մարմնական զգացողությունները | դեկտեմբեր | |
| XVII | Հարգանք սեփական անձի նկատմամբ. **դաս-քննարկում** | հունվար | |
| XVIII | Հայոց բանակի ծնունդը | հունվար | |
| XIX | Իմ երկրի պատմության հերոսական էջերը | հունվար | |
| XX | Տաղավար տոներ։ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոները և դրանց խորհուրդը | փետրվար | |
| XXI | Տյարնընդառաջ (Տրնդեզ) տոնի քրիստոնեական խորհուրդը | փետրվար | |
| XXII | Մեր ոսկեղենիկ մայրենին։ Հովհաննես Թումանյանի ծննդյան 153 ամյակը։ Գիրք նվիրելու խորհուրդը | փետրվար | |

| | | | |
|---|---|---|---|
| XXIII | Ավանդույթներ և սովորույթներ | փետրվար | |
| XXIV | Ընտանիք.***հայ ավանդական ընտանիք*** | մարտ | |
| XXV | Ծնող լինելը որպես կյանքի արժեք | մարտ | |
| XXVI | Ինչ է սերը:<br>Դասի նպատակն էր աշակերտներին ծանոթացնել մարդկային սիրո բազմազան դրսևորումներին, սովորեցնել սեփական զգացմունքների դրսևորմանը, զարգացնել ուրիշների զգացմունքները հասկանալու հմտությունը, դաստիարակել հայրենասիրություն: | մարտ | |
| XXVII | Երազում եմ դառնալ… | ապրիլ | |
| XXVIII | Մարդ լինելու արվեստը | ապրիլ | |
| XXIX | Բնությունը որպես անձեռակերտ իրողություն | ապրիլ | |
| **XXX** | ՀԱՅԿԱԿԱՆ ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԼՈՒՅՍ ԴԵՄՔԸ<br>«Ես մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ…» | ապրիլ | |
| **XXXI** | «Բախտավորությունն այն է կյանքում, որ ձեռքեր ունես կառուցելու…».աշխատավորների միջազգային օրվա առաջացումը | մայիս | |
| **XXXII** | Մայիսը՝ հաղթանակների ամիս | մայիս | |
| **XXXIII** | Նվեր Սաֆարյանի ծննդյան օրվան նվիրված դաս | մայիս | |
| **XXIV** | Դպրոցը՝ ուսումնական դարբնոց: Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին : | մայիս | |